հանջները իր ցանկութեան համեմատ չեն կատարւում, այն ժամանակ էլ նրա մտրակը սարսափելի գործ է տեսնում: Գերդաստանի պատիւն անգամ զոհւում է նրա մոլի կրքերին: Երեւակայեցէք մի գիւղական պարզ, նահապետական ընտանիք, որ բոլորը մի հարկի տակ են ապրում, եւ նրանց մէջ խառն է անբարոյական տաճիկ զինոորը: Հայը ամէն հարստահարութեան սովոր է համբերել, բայց երբ դիպչում են նրա ընտանեկան պատոին, նա այդ ժամանակ կորցնում է իր համբերութիւնը: Այդ էր, որ գրգռեց հասարակութեանը՝ բողոքել բարձր կառավարութեան, որ զինոորները հեռացոեն իրանց տներից: Կառավարութիւնը ի նկատի առեց նրանց բողոքը եւ հրամայեց ամէն տեղ իր ծախքով զօրանոցներ կառուցանել: Արքունի շինոածքների կապալառոի, Շարման-բեկի համար մի մեծ գործ բացոեցաւ: Նա դիմեց միամիտ գիւղացիներին, ասելով. «Եթէ ցանկանում էք, որ զինոորները ձեր տներից հեռանան, պէտք է զօրանոցները ձեր ծախքով շինել տաք, որովհետեւ այդպէս է հրամայոած»: Խեղճ գիւղացիները յօժարւում են ամէն ինչ զոհել, գէթ ազատոեն անտանելի հիւրերից: Ով որ փող ունէր, փող էր տալիս, ով որ փող չունէր, ինքն էր աշխատում իր անասունների հետ, քար, փայտ եւ կիր կրելով: Այդպիսով զօրանոցները կառուցւում են: Այդ մեծ ծառայութիւնը վարձատրւում է այն մեծ շքանշանով, որ Շարման-բեկը կրում էր կուրծքի վրայ, թէեւ զօրանոցների ծախքը մի կողմից խեղճ հասարակութիւնն էր տուժում, միւս կողմից՝ արքունի գանձարանը:

— Շատ բարեպաշտ եւ ազգասէր անձն է, պարոն բժշկապետ, — աւելացրեց առաջնորդը: — Եթէ գիտենայիք որքան բարիքներ է գործել դա մեր հասարակութեանը: Շատ ժամանակ չէ, որ իր ծախքով նորոգել տոեց մի վանքի խարխուլ տաճարը:

Վերջին խօսքը ճշմարիտ էր: Բայց ժողովուրդը կողոպտել եւ տաճարներ կառուցանել, այդ հազիւ թէ կարելի էր բարեպաշտութիւն համարել: Ասլանը ոչինչ չպատասխանեց: Բայց Շարման-բեկը, լսելով սրբազանի գովասանքը, ինքնաբաւական կերպով իր տեղում շարժոեցաւ, նրա աղիւսի գոյնով անշարժ դէմքի վրայ երեւաց ժպիտի նման մի բան, եւ ձեռքը տարաւ դէպի կուրծքը, կարծես տեսնելու համար՝ արդեօք շքանշանը իր տեղո՞ւմն է:

Առաջնորդը շարունակեց ծանօթացնել միւսներին.

— Դա մահտեսի Թորոսն է, մի քանի անգամ Երուսաղէմ ուխտ է գնացել. մեր քաղաքի հարուստ եւ նշանաւոր վաճառականներից մէկն է, միեւնոյն ժամանակ մեր մայր եկեղեցու երեցփոխանն է: Մեծ ծառայութիւններ է արել եկեղեցուն, շատ ապրի, չափազանց բարեպաշտ եւ ազգասէր մի անձն է: